

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

— Կոյրերու համար նոր գործիք մը հնարած է ըժ. Դիւսօ : Այս գործիքին հրաշքն այն է որ՝ կոյրերը պիտի կարենան այսուհետեւ գրել եւ իրենց գրածը սրբագրել, թուաբանական գործողութիւններ կատարել եւ նկարել իսկ . . . Նոյն բժիշկն հնարած է նաեւ տեսակ մը սիկեմատոգրաֆ, որ կոյրերու մատերուն հպելով տեսնելու ճաշակը կուտայ անոնց :

— Անթել հեռագրի նոր գրութիւն մը հնարած է F. Collins, որ Մարկոնիի գէմ մրցողի համբաւն ունի : 2000 մետր հեռաւորութեան վերայ փորձեր կատարուած են արդէն եւ շատ յաջող արդիւնքներ ձեռք բերուած : Այս նոր գրութիւնը կը կայանայ գեղնի միջոցով հաղորդակցութեան մտնելուն վրայ, մինչդեռ Մարկոնի օդի միջոցով կը կատարէր : Գործողութիւնը շատ պարզ է եւ ամէն մարդ կարող է փորձել . նոյն իսկ ճանապարհորդներ կրնան հետերնին տանիլ ամէն տեղ եւ գործածել ի հարկին — առանց վճարի : Գործիքը շատ պարզ է : Հաղորդիչ թելին ծայրը գրէք շշի մը մէջ . շիշն ալ զետեղեցէք գետինը գրուած ջրով լի ամանի մը մէջ . եւ ահա պատրաստ է գործիքը, որ անթել հեռախօսի երեւոյթն ունի :

— Խօսող լոյսի նորութիւն մ'ալ կը յիշեն այս օրերս տեղական թերթերը : Թերեւս դալ անգամ գրենք այս մասին :

— Հեռախօսութեան լուր մը կը հասնի մեզի Տուրինոյէն, ուր բնախօս Լոմբրոզոն կը հրատարակէ թէ՛ հիւանդ մը, որ ընթերելու վրայ էր, յանկարծ կը թողու սեղանն եւ կսկսի լալ, ըսելով որ կզգայ թէ իր մայրը մեռնելու վտանգին մէջն է, — առանց կանխաւ գիտնալու սակայն մօրը հիւանդ լինելը : Եւ իրօք ալ կատուգուի, որ հեռաւոր քաղքի մը մէջ, նոյն օրն իսկ, մեռած է խեղճ կինը :

☞ Գետնաշարժը գրեթէ բոլորովին կործանած է Շամախի քաղաքը : Զոհերու թիւը շատ մեծ է : Մարաղա գիւղին մօտերը հրաբուդիս մը երեւան ելած է : Գօգչայ գետը փլուածքներու պատճառով հունը փոխած է :

☞ Յաւալի է որ Կ. Պոլսի Ազգ. Պատրիարքարանն ստիպուած է գաւառներու որբանոցները փակել դրամի չգոյութեան պատճառով . բայց ուրախ ենք որ Պատրիարքարանը շատ օգտակար տնօրինութիւն մ'ըրած է որբանոցներու տեղ արհեստանոցներ բանալու ձեռնարկելով : Այս մասին շրջաբերականներ զրկուած են արդէն ամէն տեղ . ժողովրդին կը մնայ գրական կամ՝ լաւ եւս՝ հնչուն կերպով պատասխանել Պատրիարքարանի կոչին, որ ուղղուած է ազգայիններու ամէն գոտակարգին :

☞ Պարիսի Հայոց Բարեգործական Ընկ. երեկոյթին, որ տեղի պիտի ունենայ Մարտի 8ին, հովանաւորութիւնն յանձն առած է նշանաւոր երեսփոխան դ'Էստուրնէլ զը Կոնստան :